Netherlands Institute for Multiparty Democracy

oxYGen

ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ-ՀՐԱՎԵՐ

Ծրագրի անվանումը՝ Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիա

Մեկնարկ՝ 23 նոյեմբերի, 2023թ.

Ավարտ՝ 23 ապրիլի, 2024թ.

Առաջադրանքի տևողությունը՝ 5 ամիս

Ծրագրի նկարագիր

Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիան ստեղծվել է ՕքսԵՁեն հիմնադրամի և Նիդեռլանդների բազմակուսակցական ժողովրդավարության ինստիտուտի համագործակցությամբ:

Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիան միտված է տարբեր հասարակական և քաղաքական փորձառություն ունեցող անհատներին ապահով տարածք տրամադրելուն, վերջիններիս երկխոսության և տարբեր խնդիրների մասին ունեցած ընդհանուր գաղափարների փոխանակման խթանմանը:

Ծրագրի նպատակն է՝ ձևավորել քաղաքական ձգտումներ ունեցող երիտասարդների նոր սերունդ՝ զինված անհրաժեշտ գիտելիքով ու հմտություններով, որոնք ունեն արդյունավետ առաջնորդ դառնալու և Հայաստանում ժողովրդավարության ու քաղաքացիական ներգրավման ջատագով լինելու մոտեցումներ՝ նպաստելու ժողովրդավարության, մասնակցայնության և առաջնորդության մշակույթի ձևավորմանը:

Խնդիրները

- Նպաստել տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ երկխոսության ձևավորմանը, ձևավորել վստահություն և համագործակցություն՝ Հայաստանի տարբեր փորձառությամբ և քաղաքական ձգտումներ ունեցող երիտասարդների միջև՝ ուսուցանելու և ուղղորդելու, բանավեճերի, քաղաքական և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:
- Մասնակիցներին ուսումնական հագեցած ծրագրով փոխանցել ժողովրդավարության, քաղաքական համակարգերի, առաջնորդության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և մոտեցումներ՝ իրենց համայնքներում և ազգային մակարդակում արդյունավետ առաջնորդներ և ժողովրդավարության ու քաղաքացիական ներգրավման ջատագովներ դառնալու համար:
- Ձևավորել տարբեր փորձառությամբ և քաղաքական ձգտումներ ունեցող երիտասարդների ուժեղ ցանց՝ հիմնված վստահության և համագործակցության վրա՝ Հայաստանում

երիտասարդների քաղաքական մասնակցության և առաջնորդության կայունության համար:

Առաջադրանքի նկարագրություն

Ծրագրի մշակման և կառավարման համար ներգրավել առնվազն 8 դասընթացավարների, ովքեր կմասնակցեն դասընթացավարների 4-օրյա վերապատրաստմանը (TOT): Հետագայում վարապատրաստման ծրագրից հետո այս դասընթացավարներին կառաջարկվի աշխատանքային պայմանագիր՝ Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիայի ուսումնական պլանը համատեղ մշակելու, նախապատրաստելու, ակադեմիայի դասընթացներն ու այլ գործողություններն իրականացնելու նպատակով:

Առաջադրանքի նպատակը.

Թիրախային լսարանի համար մշակել և անցկացնել դասընթացներ ժողովրդավարության տարբեր մոդելների, քաղաքական համակարգերի, քաղաքական կուսակցական համակարգերի, մարդու իրավունքների, երկխոսության և բանակցությունների, առաջնորդության, քաղաքականության մշակման, հաղորդակցման և քարոզարշավի հմտությունների վերաբերյալ: Թիրախային լսարանը բաղկացած կլինի Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիայի 25 մասնակիցներից, որոնցից 30%-ը քաղաքացիական հասարակության կազմակերպություններից, 30%-ը՝ քաղաքական կուսակցություններից, իսկ 40%-ը՝ քաղաքական նկրտումներ ունեցող անկախ անհատներից:

Դասընթացավարների նկարագիր և պայմաններ

Դասընթացավարների պարտականությունները.

Մասնակցություն դասընթացավարների վերապատրաստման ծրագրին (TOT).

- Մասնակցել դասընթացավարների վերապատրաստման 4-օրյա ծրագրին՝ խորացնելու ակադեմիայի դասընթացներն անցկացնելու համար պահանջվող հմտություններն ու գիտելիքները:

Ուսումնական պլանի մշակում.

- Համագործակցել TOT-ի փորձագետի և այլ դասընթացավարների հետ՝ համատեղ ստեղծելու Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիայի համապարփակ ուսումնական ծրագիրը, որն ընդգրկում է այնպիսի հիմնական թեմաներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, քաղաքական համակարգեր, առաջնորդություն, քաղաքականություն մշակման գործիքներ:
- Դասընթացավարների վերապատրաստման ծրագրի շրջանակներում նախապես մշակել ակադեմիայի ընթացքում անցկացվող դասընթացի մոդուլ վերը նշված թեմաներով կամ թեմաներից մեկով ՝ մշակված նմուշի համաձայն:

- Պատրաստել թեմատիկ պրեզենտացիաներ և բաժանվող նյութեր:

Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիայի դասընթացների անցկացում.

- Որպես դասընթացավար մասնակցել ծրագրի երկօրյա՝ թվով 6 դասընթացներին, որոնք կանցկացվեն 3 ամիսների ընթացքում՝ շաբաթ և կիրակի օրերին (երկու շաբաթը մեկ պարբերականությամբ):
- Հաջողությամբ անցկացնել Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիայի դասընթացները վերը նշված թեմաներով կամ թեմաներից մեկով:
- Օգտագործել ինտերակտիվ և գրավիչ մեթոդներ՝ արդյունավետ ուսուցում և գիտելիքների փոխանցում ապահովելու համար:
- Խթանել ակտիվ մասնակցությունը, քննադատական մտածողությունը և ձեռք բերված գիտելիքների և հմտությունների գործնական կիրառումը ամբողջ ծրագրի ընթացքում:
- Տրամադրել դասընթացի ամփոփ հաշվետվություն՝ ձևանմուշի համաձայն:

Բանավեճերի կազմակերպում.

- Մյուս դասընթացավարների հետ համատեղ կազմակերպել առնվազն երեք ոչ պաշտոնական բանավեճեր՝ քաղաքական գործիչների և քաղաքականություն մշակողների մասնակցությամբ: Այս բանավեճերը կանցկացվեն մասնակիցների կողմից առաջարկված հարցերի շուրջ՝ հնարավորություն տալով նրանց գործնականում կիրառելու ակադեմիայում ձեռք բերված հմտությունները:

Վերջնական հաշվետվության տրամադրում.

- Պատրաստել և ներկայացնել ծառայությունների տրամադրման վերջնական հաշվետվություն:

Պահանջվող փորձն ու որակավորումները.

- Ժողովրդավարության, քաղաքական համակարգերի, առաջնորդության կամ հարակից առարկաների հետ կապված ծրագրերի մշակման և դասընթացների անցկացման փորձ:
- Ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության իմացություն:
- Ինտերակտիվ և մասնակցային դասընթացների նախագծման և իրականացման փորձ:
- Ծանոթություն Հայաստանի քաղաքական դաշտին և դրանում երիտասարդության ներգրավվածությանը:
- Գրավոր և բանավոր հաղորդակցության հմտություններ, ճշտապահություն և ճկունություն:
- Մասնակիցների տարբեր խմբերի հետ համատեղ աշխատելու ունակություն:
- Քաղաքական չեզոքություն և անաչառություն:

Netherlands Institute for Multiparty Democracy

oxYGen

Հաշվետվություն՝

Դասընթացավարները կզեկուցեն Բազմակուսակցական ժողովրդավարության հայկական ակադեմիայի ծրագրի ղեկավարին:

Դիմելու ընթացակարգ

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները պետք է ուղարկեն իրենց ինքնակենսագրականը, նախկինում նմանատիպ աշխատանքի նկարագիրը (մշակված և իրականացված ծրագրեր, դասընթացներ և այլն) և առաջարկ, որտեղ կներկայացնեն իրենց մոտեցումը ուսումնական պլանի կառուցվածքի վերաբերյալ, ինչպես նաև իրենց ֆինանսական ակնկալիքները: Պահանջվող փաստաթղթերի փաթեթը պետք է ուղարկել asardaryan@oxygenfund.am էլեկտրոնային հասցեին՝ թեմայի դաշտում գրելով՝ «Դասընթացավարի հայտ», CC-ում նշելով kayvazyan@oxygenfund.am էլեկտրոնային հասցեն:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է **2023 թվականի հոկտեմբերի 31-ը՝ ժամը 23:00-ն:**

Հայտերի գնահատում.

Հայտերի գնահատումը տեղի կունենա մինչև **2023 թվականի նոյեմբերի 10-ը:**

Կդիտարկվեն միայն սահմանված պահանջներին համապատասխանող դիմորդների դիմումները:

Նախնական ընտրությունն անցած հավակնորդների հետ կանցկացվի հարցազրույց – հանդիպում՝ տեսազանգի միջոցով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել երիտասարդական համակարգող Անի Սարդարյանի հետ՝ զանգահարելով +37496007805 հեռախոսահամարին (երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 09:30-ից մինչև 17:30-ը) կամ գրելով asardaryan@oxygenfund.am էլեկտրոնային հասցեին: